ԳՈՐՏ ԵՒ ԵԶՆ

գորտոյ տեսեալ Եզն՝ի խաղի պարարակ,
իղձ ըղձացաւ լինել նորուն հանդունակ.
Տըւեալ չընչոյ թափ ուժգին,
Եղև չափոյն նա կըրկին.
Եւ առ ընկերն դարձեալ, աչօք կըկո-ցեալ, —
« Ինձ դու, ազէ, ձայն տուր ասէ,
« Իցե՞մ Եզինդ հաւասար ։ » —
« Մի՛ դու, ընկերն ձայնէ նըմա մեղմա-բար,
« Ընդ վայր տանջիս ուռուցեալ ։
« Ո՞ Եզն իցէ, և ո՞ դու.
« Դու թըզաչափ, նա մըսեղէն բըլուր է ։ —
« Ոչ, կըրկնէ գորտն, միտ դիր, անսա,
« Տես թէ որպէս ես մեծացայ.
« Հասի Եզինըդ չափու ։ » —
« Եւ ոչ անգամ եղջեր նորա ։ » —
« Հայեաց այժմիկ, ապա ասա. » —
Եւ ես ուժգին ուռուցեալ
Եղև ընդ մէջ պայթուցեալ ։

Նըման գորտոյս նախանձաբեկ
Բիւր օրինակ մեզ կայ մերձ .
Բազումք իւրեանց չափոյն անգէտք
Ընդ հուպ լինին լինքնահերձք ։
Չի քան ըստ չափ ձըկտին անձանց,
Գալով պայքար մեծամեծաց ։ —
Չէ՞ զարմանաս թէ Մարկոս,
Այր անաւագ վաճառական,
Թողեալ զխանութ և խոյս ետ ։
Եւ նոր իշխանըն Կիրակոս
Ի գետն հեղձաւ ետ ընդ ետ ։
Իսկ Թէոդորըն մեր փարթամ,
Ցորժամ լըսես անազան,
Թէ պարտատեարցն 'ի հարկէ
Մատըն անձին եղեալ է,
Զարմանալոյ չէ արժան

Թարգմ. Հ. ՔԵՐՈՎԲԷ Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

ՊԱՏԻՒ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

« Ակնարկեցինք յիւրում ժամանակի այն կորովի, ճարտարախօս և նորանշան ճառը, որով Կեսար Գանդու քանի մը ամիս առաջ հաստատեց հանդիսիւ 'ի Միլան՝ Հեղինակաց իտալական նոր ընկերութիւնը ։ Ճառին նիւթն էր՝ դպրութեանց պատիւն ։ Զորուեցաւ մեզ, ինչպէս փափագէինք, զայն լի բովանդակ հրատարակել. հաչակաւոր մատենագրէն շնորհեցաւ մեզ հետևեալ պատառը հրատարակելու, որ անշուշտ մեծ յօժարութեամբ պիտի կարդացուի ։ Ցեա խօսելոյ հեղինակաց և հրատարակչաց միջի յարաբերութեանց, իւրաքանչիւրոց ըղձից և թերութեանց վրայ, յառաջ կը վարէր Գանդու այսու ոճով » ։

Այսպէս իտալական պատկերազարդ թերթն. 'ի մէջ բերենք նաև իրեն քանի մ'ամիս առաջ ակնարկած խօսքերը, ճառին որպիսութիւնը լաւագոյն կերպով իմանալու համար ։

« Ինչպէս անգրագէտ է մեր հասարակութիւնն ։ — կամ, գէթ ինչպէս սակաւ գրական է ։ — Ի Գաղղիա, չորս հանճարեղ խօսք կ'ըսէ Եռնեսդոյ Ռընան, և բարիզցիք ընդ չորս հողմս կը տարածեն զայն . յիտալիա, ողջոյն մը կ'արտաբերէ Կեսար Գանդու, որ ժամէ մ'աւելի կը տևէ, և կը զբաղին անոր միայն այն հարիւրի չափ գրագէտք, լրագրողք, հրատարակիչք, եկած մտիկ ընելու զայն 'ի քաղաքաբաշխական դահլճին, ուր վիճաբանեցաւ օրէնսդրութեան մը վը-

digitised by A.R.A.R.@